

1. Մինաս Երէց, որ 1613ին Հարանց վարք մը կ'օրինակէ Եղինգեան գիւղի մէջ⁴ :

2. Նոյն Մինաս Երէց 1615ին կ'օրինակէ Հարանց վարքի ուրիշ գրչագիր մը նոյն Եղինգեան գիւղի մէջ⁵ :

3. Հաւանօրէն նոյն Մինաս գրչէն է նաեւ Էջմիածնի Թ. 1678 ձեռագիր Ժողովածոյքը :

4. Ղուկաս գրիչ Թումայ Եպիսկոպոսի խնդրանքով կ'օրինակէ Վիեննայի Մխիթ. Մատենադարանի Թ. 168 ձեռնագրութեան գիրքը⁶ :

5. Նոյն Ղուկաս գպիր ի խնդրոյ Ղազար քահանայի եւ Սարգիս Եպիսկոպոսի կ'օրինակէ Ն. Լամբրոնացւոյ Խորհրդածութիւնքը, Սիւնեաց Գետաթաղ գիւղը Զորայարոյց Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովանոյն տակ, Զաքարիա արքեպիսկոպոսի յորդորմամբ, ուր կը յիշուին «Հայրն Անապատի Սարգիս պարոնաէր եւ այլ միարան եղբարք⁷» : Դարձեալ 1616ին կ'օրինակէ Աւետարան մը ի խնդրոյ Զաքարիա կրօնաւորի «ի յերկիրն Որոտան, ի գիւղս որ կոչի Գետաթաղ, ընդ հովանեաւս ուրբ Աստուածածնիս»^{7*} :

6. Թովմաս Եպիսկոպոս «տէր Սարգիսի

⁴ Հ. Աճառեան, Յուլյակ հայ. ձեռագրաց Թատրիզի, էջ 99—100 :

⁵ Ձեռ. էջմ., 785 :

⁶ Տաշեան, Յուլյակ, էջ 482 :

⁷ Աճառեան, անդ, էջ 80—81 :

^{7*} Լալայեանց, Յուլյ. Վասպուրականի հայ. ձեռագրաց, էջ 852 :